# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
# 2022

# ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
# ԵՎ
# ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշաններ:

**Մաղթում ենք հաջողություն:**

## Ա մակարդակ

**1** **Համարակալված բառերում և բառաձևերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքի բոլոր թվերի դիմաց են ճիշտ նշված:**

1. հասարակա-այինն երկիր, 2. եղնիկների խայ-ալը, 3. կարկաչ-ն առվակ, 4. Ա-թամար կղզի, 5. աչքի կո-, 6. ա- ու ահյակ, 7. աշխարհի չորս ծա-երը, 8. Սոֆ- մայրաքաղաք:

1) 1-ծ, 2-թ, 4-ղ, 6-ջ
2) 2-տ, 3-յու, 5-պ, 7-գ
3) 1-ծ, 4-ղ, 6-չ, 8-իա
4) 3-ու, 5-պ, 7-գ, 8-իա

**2** **Ո՞ր շարքի բոլոր բառերի (բառակապակցությունների) բաղադրիչներն են գրվում *անջատ:***

1) ի(մի)բերել, ծայրից(ծայր), տեր(Սարգիս), (այսու)հետև
2) դեմ(դիմաց), նոր(խարբերդցի), երկու(երրորդ), ի(զեն)
3) ըստ(իս), սրբություն(սրբոց), կուժ(կոտրուկ), դուռ(դռան)
4) Սանկտ(Պետերբուրգ), (առ)այն, ձեռք(բերել), ինչ(որ)է

**3** **Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:**

1) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ, ԹԱԻԼԱՆԴԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵՀՈՒՍՈ ՀՐՎԱՆԴԱՆ, ՍՈՂՈՄՈՆ ԻՍԱՍՏՈՒՆ
2) ՄԵԾ ՀԱՅՔ, ԼՅՈՒԴՈՎԻԿՈՍ ՏԱՄՆՎԵՑԵՐՈՐԴ, ՄՈՎՍԵՍ ՄԱՐԳԱՐԵ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ
3) ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏ, ՏԻԳՐԱՆ ՄԵԾ, ԺԱՆ ԲԱՏԻՍՏ ՄՈԼԻԵՐ, ԵՐԵՎԱՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
4) ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ, ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ, ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ, ՌԻՉԱՐԴ ԱՌՅՈՒԾԱՍԻՐՏ

**4** **Ո՞ր շարքի բոլոր բառերում երկհնչյունի հնչյունափոխություն կա:**

1) մեհենական, կենսախինդ, հուզախառն, կղզեխումբ
2) ատենակալ, աշխուժորեն, ալեծուփ, ալրաթաթախ
3) խուզարկու, վարագուրել, քրիստոնեական, բնավեր
4) թուլակազմ, հեծելազոր, գուշակություն, միութենական

**5** **Ո՞ր շարքի բոլոր բառերում *ը*-ի սղում կա:**

1) փխրուն, մանրավաճառ, ակնհայտ, ծանրաձող
2) բարձրաձայն, եզրային, աստղազարդ, սանդղահարթակ
3) ցածրահասակ, կակղամորթ, երփներանգ, դստրիկ
4) մեղրածոր, կարծրանալ, սանրել, ծնրադիր

**6** **Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

1) վարանում, տարակույս, երկբայություն, մեղադրանք
2) աջակցել, նպաստել, սատարել, օժանդակել
3) մեծանուն, հանրաճանաչ, հռչակավոր, փառատենչ
4) սնամեջ, փուչ, ունայն, ընչազուրկ

**7** **Ո՞ր շարքի բոլոր զույգերն են կազմված հականիշներից:**

1) իրազեկ–անտեղյակ, քամահրանք–բամբասանք, բացասում–հաստատում
2) զարդարուն–անպաճույճ, անթաքույց–սքողված, անդորր–սաստիկ
3) շաղակրատ–քչախոս, գժտված–համերաշխ, կայտառ–շենշող
4) խաղաղ–փոթորկուն, տարտամ–որոշակի, լայնարձակ–անձուկ

**8** **Ո՞ր դարձվածքի բացատրությունն է սխալ:**

1) ***մի սանրի կտավ*** – միևնույն գործին նվիրված
2) ***գլխի տակ փափուկ բարձ դնել*** – սնոտի խոստումներով խաբել
3) ***ուրբաթը շուտ գալ, քան շաբաթը*** – որոշված գործը խափանող անակնկալ բան պատահել
4) ***սևը սպիտակ դարձնել*** – սուտը որպես ճշմարտություն ներկայացնել

**9** **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ *չկա:***

1) «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության վերջին քառյակը մեծ տաղերգուի քանքարի փայլատակումն է:
2) Հնագետները պեղելով կավից օրական զատում են մի ուլունք, ջնարակած մի կտոր ափսե, մի կոպիտ արծաթադրամ:
3) Մարզպետունին զգում էր վերահասու վտանգը, սակայն չէր կարողանում իշխաններին միավորել:
4) Մեծ իմաստասերը գրեց, թե տկարամիտ են այն գլուխները, որոնց թույր կարծիքով Երկիրը լեռներից է շինված. լեռներից միայն Հայքն է շինված:

**10** **Ո՞ր տարբերակում է ընդգծված բառը իմաստով տարբերվում մյուս տարբերակներում ընդգծվածներից:**

1) Կամ ինչպես քաջքերն **այրերի** մթնից,
Երբ նայում է մարդ քարափի գլխից
Կամ թե ուշացած անցնում է ձորով,
Խաբում են, կանչում ծանոթ ձայներով:
2) Այդպես էլ ծնվեց մեկը նրանցից,
Ծնվեց նա՝ **Այր** մի՝ Մաշտոց անունով:
3) Ես գրում եմ բրուտների **այրի** մասին, որի կիսամթում բրուտը ոտքով պտտեցնում է փայտե չարխի կլոր տախտակը:
4) Եվ մութ **այրերից** մամռոտ ժայռերի,
Թավուտ ծմակի լռին խորքերից
Մանուկ հասակիս հնչուն ծիծաղի
Արձագանքն ահա լսում եմ նորից:

**11** **Ո՞ր նախադասության մեջ թվական կա:**

1) Հենց այդ պահին աշխարհի օրենսդիր Փարիզում կտրվեց տասնհազարամյա արվեստի ցուցահանդեսի ժապավենը:
2) Աղյուս թափող Անդրեասը երրորդ տարում կառուցեց մի հնոց՝ աղյուսը թրծելու համար:
3) Երեկոյան, երբ երկնքում սավառնում էին մեր թռուցիկները, թվում էր, թե քաղաքի վրա լողում են տասնյակ լուսիններ:
4) Նրան պատասխանեց զանգակի ղողանջը, որ քանի՞երորդ անգամ լսելի եղավ եկեղեցու բարձրությունից:

**12** **Ո՞ր շարքում ածական *չկա:***

1) հպարտորեն, թանկարժեք, ոստրե
2) անշուշտ, հիմնովին, հեծելազոր
3) բազմիցս, բրոնզաձույլ, խորտիկ
4) նույնպիսի, հեռավոր, առանձնապես

**13** **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բոլոր այն գոյականների համարները, որոնց գործիական հոլովը կարող է կազմվել *ք*-ով:**

1. հարձակում, 2. իրավունք, 3. անձ, 4. արյուն, 5. մաս, 6. անուն, 7. լռություն

1) 1, 3, 5, 7
2) 2, 4, 5, 6
3) 1, 4, 6, 7
4) 2, 3, 4, 7

**14** **Ո՞ր տարբերակում դերանվան՝ սխալ հոլովաձևով գործածություն *չկա:***

1) Ես քո վրա հույս չեմ դնում:
2) Մեր մոտից մինչև այդ գյուղը ոտքի ճանապարհ է:
3) Նա դեռ իրեն օրում վիշտ ու տառապանք չէր տեսել:
4) Մինչև լեռնագագաթը իմ հետ ոչ ոք չբարձրացավ:

**15** **Ո՞ր շարքի բոլոր բայերն են *ա* խոնարհման:**

1) հասկացել եմ, խոսում էր, դարձի՛ր
2) բարձրացի՛ր, ասաց, դողացող
3) հուսանք, ծիծաղում եմ, վշշում է
4) մնացինք, կհավատա, եկավ

**16** **Ո՞ր նախադասությունն է բարդ համադասական:**

1) Միջնադարյան գրիչները գրքի մասին արտահայտվել են այնպես, ինչպես կարտահայտվեին կենդանի մարդու մասին:
2) Եթե Աստղիկը զիջող էր ու դյուրահավատ, ապա Գոհարը հիշաչար էր ու համառ:
3) Երկրի թագավորը, ապիկար ու փոքրոգի լինելով, նախանձում էր քաջ զորապետի հռչակին՝ իրեն զգալով նվաստ ու չնչին:
4) Հին զենքերի՝ տեգերի, աղեղների և զրահների փոխարեն զինապահեստներում շողշողում էին ծիրանը, դեղձը, նուռը և խաղողը:

**17** **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

*Ով մի քանի օր տեսած չէր լինում Նահապետի աշխատելը, նկատում էր տարբերությունը, ով ամեն օր էր տեսնում, կարծում էր, թե պատն անշարժ իր տեղում է և բոլորովին չի բարձրանում:*



**18** **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն նախադասությունների համարները, որոնցից երկուսում էլ բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1. Գնա և պատգամիր հանուր աշխարհին հարավին հյուսիսին արևելքին արևմուտքին երջանկության իմաստը:
2. Ամեն գարուն ձնծաղիկների երևալուն պես գալիս էին արագիլները:
3. Նրա ահեղագոչ ձայնը անցավ որպես փոթորիկ այդ երկրի մի սահմանից մինչև մյուս սահմանները:
4. Աշնան պայծառ առավոտ էր Արարատյան դաշտի հրաշագեղ մի առավոտ:

1) 1, 2
2) 2, 3
3) 1, 3
4) 2, 4

**19** **Ո՞ր նախադասության մեջ միջոցի խնդիր կա:**

1) Շահ-Աբասը սիրով լսեց նրա խնդրանքը, ապա մեծամեծ խոստումներ արեց կաթողիկոսին և հասավ Հայաստան:
2) Հետո անձրև սկսվեց, և անձրևի առաջին կաթիլների հետ անջրանցիկ կտորով ծածկեցին ցորենը:
3) Ու խավարն անհուն գգվանքով թեթև Ծավալվեց շուրջս ու փռվեց վրաս:
4) Եվ ահա այդ նպատակով էլ նա հասավ Հարանց հռչակավոր անապատը, ժողովեց այդտեղ կորովի մարդկանց, կազմեց միաբանություն:

**20** **Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ** ***չկա:***

1) Սարդարապատում ողջ հայ ժողովուրդը միասնական պայքարի դուրս եկավ:
2) Դրսում ցուրտ էր, և գյուղի փողոցներում ոչ մի մարդ, ոչ մի կենդանի արարած չէին երևում:
3) Պետական բոլոր մուծումները ձեռնարկության կողմից կատարվել է ժամանակից շուտ:
4) Այդ օրը պահարանից անհետացան ամուսնու նվիրած մատանին մի քանի ուրիշ զարդերի հետ:

**21** **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

1) Ըմբոստ մի ծառ՝ առույգ, առողջ ոստերով, անտեսելով արգելքները, անվրդով բարձրանում էր վեր՝ դեպի ամպշող լեռները:
2) Քանի դեռ լույս էր, և ճանապարհը՝ լայն, գնում էի արագ՝ խուսափելով տարատեսակ վտանգներից և փորձանքներից:
3) Ադամը ծանր ու հաստատուն քայլերով հետևում էր Լիլիթին՝ աչքերը չհեռացնելով նրա բոցերի պես ծփծփացող մազերից:
4) Թե ում էի պարտական իմ փրկության համար, ես այդպես էլ չիմացա, բայց այդ միտքն ինձ երկար ժամանակ տանջում էր:

**22** **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Նա լսում էր անտուն, հալածական քամուն, …….*

1) որ հավաքել էր իր անկյան, անհատնում ճանապարհները անցնելիս:
2) որը զօրուգիշեր հնչում էր հազար-հազար մեղուշ ձայներով:
3) որովհետև նրա հոգին լսում էր նրանց երգերը:
4) որ բուրմունքի մորմոքով գեղգեղում էին սերն ու բյուրեղային արցունքները:

**23** **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Գաճաճ մոլորակները շատ փոքր չափեր ունեն. կատարված դիտարկումների համաձայն՝ ամենախոշորներից մեկը՝ Ցերերան, իր զանգվածով 7500 անգամ փոքր է Երկրից:
2. Սրանով էլ բացատրվում է այն հանգամանքը, որ եթե Երկիր մոլորակի վրա մարդը կարող է ցատկել միջին հաշվով ընդամենը 50 սմ, ապա այդպիսի աստղակերպի, օրինակ՝ Վեստայի վրա՝ մինչև 30 մ. այդպիսի թռիչքով Երկրի վրա հնարավոր կլիներ անցնել բարձր ծառերի վրայով:
3. Արևի շուրջը պտտվում են 8 խոշոր մոլորակներ, դրանցից բացի կան մի քանի, այսպես կոչված, գաճաճ մոլորակներ, ինչպես նաև բազում աստղակերպներ:
4. Գաճաճ մոլորակներից զանգվածով ավելի փոքր են աստղակերպները, որոնց վրա ծանրության ուժը այնքան չնչին է, որ մարդը, հրվելով աստղակերպի մակերևույթից, կարող է նույնիսկ թռչել հեռանալ բաց տիեզերք, ինչը բացառվում է Երկրի պարագայում:

1) 3, 1, 4, 2
2) 4, 3, 2, 1
3) 3, 4, 1, 2
4) 4, 1, 2, 3

**24** **Ո՞ր հատվածը արևմտահայերենով *չէ:***

1) Ինչո՞ւ արդյոք խորշակահար
Կ’ընե ծաղկունք դեռափթիթ…
2) Անցան դարեր. դեռ Տղմուտը հեծելով
Գիշերները խանգարում է անվրդով
Ավարայրի անուշ քունը, և չունի
Մինչև այսօր նա ողբակից յուր վշտի:
3) Դեղի՛ն վարդեր մայիսի,
բուրումներով խնկավետ
թալկության մը մեջ հավետ
կը տժգունին մեկուսի:
4) Ես այգերով ու ցայգերով
Հաճախ մենակ կ’անրջեմ
Անհնարին, երկնագորով
Սեր մը, որուն տերը չեմ:

**25** **Գրերի ստեղծումից հետո առաջինը Աստվածաշնչի ո՞ր գիրքը սկսեցին թարգմանել Մեսրոպ Մաշտոցն ու իր աշակերտները:**

1) Սողոմոնի առակները
2) Ծննդոց գիրքը
3) Դավթի սաղմոսները
4) Ժողովողի գիրքը

**26** **«Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) վերաբերյալ ո՞ր պնդման մեջ սխալ կա:**

1) Հեռանալով Բաղդադից՝ իրենց ճանապարհին Սանասարն ու Բաղդասարը տեսնում են մի բարակ, բայց զորեղ առու, որի ակունքի մոտ իրենց համար ամրոց են կառուցում:
2) Քանի որ Փոքր Միհրը չի կարողանում սպանել Չմշկիկ Սուլթանին և հոր վրեժը լուծել, այդ պատճառով փակվում է Ագռավաքարում:
3) Մեծ Միհրը եղբայրներից միակն է, որ ժառանգում է հոր դյուցազնական ուժը և տիրություն անում իր երկրին ու ժողովրդին:
4) Որբացած Դավթին ուղարկում են Իսմիլ Խաթունի մոտ, բայց նա կարճ ժամանակ անց չի ընդունում վերջինիս կաթը և սնվում է Սասունից ուղարկված մեղր ու կարագով:

**27** **Ա. Բակունցի ո՞ր պատմվածքից է տրված հատվածը:**

*«Նրանք մանկության ընկերներ էին, և նրանց սերը ծնվել էր նույնքան աննկատ, ինչպես մի գիշերում բացվում է մուգ մանուշակը»:*

1) «Սպիտակ ձին»
2) «Ալպիական մանուշակ»
3) «Միրհավ»
4) «Խոնարհ աղջիկը»

**28** **Տրված հատվածներից ո՞րն է Ա. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմից:**

1) Ե՛վ անապատում, և՛ հավերժական
Անուրջում հոգիս կլսե, կզգա
Ղողանջը զանգի տիեզերական
Եվ մեղմ կգգվե տատասկին դժնյա:
2) Գնա՛, քարավա՛ն, ինձ հետդ քա՛ղշ տուր
Օտար, ամայի ճամփեքի վրա.
Ուրտեղ կհոգնիս՝ գլուխս վար դիր
Ժեռ-քարերի մեջ, փշերի վրա:
3) Ո՛չ իշխանություն, ո՛չ կռիվ, ո՛չ կին
Չեն հափշտակում հիվանդ իմ հոգին:
Ղողանջն է միայն ձիգ քարավանի
Հեռավոր, անհայտ ճանապարհների
Հրապույրներով դյութում իմ հոգին
Թափառումների տենչով անմեկին:
4) Կույր ու գուլ մարդի՛կ, առանց երազի,- առանց լսելու հեքիաթն այս վսեմ,
Իրար կոկորդից պատառ եք հանում և դարձնում աշխարհն՝ ահավոր ջեհնեմ:

**29** **Ո՞րն է Պ. Դուրյանի գլխավոր մտահոգությունը «Իմ ցավը» բանաստեղծության մեջ:**

1) առանց սիրո վայելքի կյանքից հեռանալը
2) ճակատագրի պարտադրած մշտական ցավն ու տառապանքը
3) թշվառության մեջ գտնվող հայրենիքին առանց օգնած լինելու մեռնելը
4) երիտասարդ տարիքում մեռնելը

**30** **Ո՞րը Հ. Թումանյանի քառյակի առաջին տող *չէ:***

1) Ամեն մի սիրտ ցավով լցվեց մեր դարում...
2) Հե՜յ ագահ մարդ, հե՜յ անգոհ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ...
3) Անց են կենում սեր ու խնդում...
4) Աշնան ամպին ու զամպին...

**31** **Գ. Զոհրապի ո՞ր նորավեպից է տրված հատվածը:**

*«Առտուն կանուխ կ'ելլեր, իր այրի կնոջ արդուզարդը կ'ըներ, լուրջ ու հանդիսավոր արդուզարդ մը, ու ճամփա կ'իյնար դեպի գերեզմանատունը. պզտիկ տապանին քով չոքած՝ երկար-բարակ ու ցած ձայնով կը խոսեր իր զավկին հետ, անոր մանուկի բարբառովը»:*

1) «Զաբուղոն»
2) «Ճիտին պարտքը»
3) «Այինկա»
4) «Փոստա՛լ»

**32** **Ո՞ր բառն է բաց թողած:**

*Վտարանդի, երկրում աղոտ,*
*Լուսե՜ղ, քեզ եմ երազում,*
*Եվ հնչում է, որպես աղոթք,*
*..... քո լեզուն:*

1) Բիբլիական
2) Վաղնջական
3) Արքայական
4) Հազարամյա

**33** **Ո՞ր բառերում հնչյունափոխություն կա.**

1. հանդիսավոր, 2. զեղծարար, 3. դեռափթիթ, 4. ուխտադրուժ, 5. մրցաշար,
6. անդրադարձ, 7. հոգատար, 8. բազմաձև:

**34** **Ո՞ր տարբերակներում է ենթակայի արտահայտությունը սխալ նշված *(տրված խոսքի մասով արտահայտված ենթակա չկա):***

1. Գլխավոր հրապարակում կանգնածները ջահել տղաներ ու պարուհիներ էին: *(անդեմ բայ)*
2. Տխրությունս անուշ է որպես Հեռավոր, հեռավոր կարկաչ: *(գոյական)*
3. Եվ բավական է, հասկացե՛ք ընդմիշտ, Որ Աստծուն նույնիսկ հայհոյողները Շատ ավելի են գերադասելի: *(ածական)*
4. Կածանները նրանց անծանոթ են ու երկյուղալի. մանուկները չգիտես ինչ ձորեր են մտնում: *(դերանուն)*

**35** **Ո՞ր բառերում վերջածանց կա.**

1. խավոտ, 2. սակագին, 3. ազդու, 4. ստնտու, 5. օծյալ, 6. ծաղիկ, 7. ելուստ, 8. դանակ:

**36** **Ո՞ր նախադասություններում անորոշ դերբայ կա:**

1. Այդ հովտի առվից ջուր խմելու էին գալիս եղնիկներ, ուլեր ու գառներ:
2. Նրանց ճգված մկաններում ուժն է նստել խոնավ հողի:
3. Այդ մենք ենք գալու, որ հինը փոխենք, որ աշխարհին տանք սեր ու խնդություն:
4. Պետք էր այդ մասին անպայման հայտնել սպարապետին:
5. Խոնջացած պառկեց զմրուխտե խոտի գորգին՝ մի փոքր հանգստանալու:
6. Եվ ահա հունական քառակուսի փաղանգը եկավ ու տրորելով անցավ հայերի աշխարհը:

**37** **Ո՞ր տարբերակներում է նախադասության անդամի պաշտոնը սխալ նշված:**

*Մի թխպամած օր, երբ ես և Թումանյանը Լոռուց վերադառնում էինք Թիֆլիս, երկար սպասեցինք հայկական գնացքին, որը պիտի կազմվեր հենց այդտեղ՝ կայարանում, բայց այդ գործն ուշանում էր, և ոչ ոքի հայտնի չէր՝ երբ պատրաստ կլինի:*

1. **գնացքին** – հանգման խնդիր
2. **կայարանում** – տեղի պարագա
3. **պիտի կազմվեր** – պարզ ստորոգյալ
4. **երկար** – չափի պարագա
5. **որը** – ենթակա
6. **պատրաստ** – ուղիղ խնդիր

**38** **Ո՞ր նախադասություններում բուն պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1. Բոլորին մեկ առ մեկ աչքի անցկացնելուց հետո հպարտ կեցվածքով վեր կացավ նստած տեղից ու մոտենալով ձեռքով բարևեց յուրաքանչյուրիս:
2. Լուսնկա գիշերներին խարույկի մոտ երիտասարդը ձկնորսների հետ ունկնդրում էր նրանց սազի հոգեհմա ելևէջները ծովի անուշ ձայնը:
3. Ինչպիսի ցնցող տպավորություն թողեց մեզ երիտասարդ գրողներիս վրա նրա նոր գիրքը:
4. Նավի առաջամասում գլխիկոր կանգնածը մտախոհ դիտում էր վճիտ ջրի մակերևույթը մարմարի նման անշարժ և մարմարի նման ողորկ:
5. Նրա առաջ ծառացել էին լուրջ խնդիրներ պետք է բնակարան գտներ նաև աշխատանքի մասին պիտի հոգար:

**39** **Տրված բառերից քանիսո՞ւմ ուղղագրական սխալ կա.**

հանդիպակաց, հափշտակել, անհողդհողդ, երկվորյակ, դիցուք, կարկառուն, գաղթագողի, լայնափողկ:

**40** **Տրված բառերից քանի՞սն են կրկնավոր բարդություն.**

նետ-աղեղ, աման-չաման, անթիվ-անհամար, մարդ-մուրդ, առոք-փառոք, այսօր-վաղը, գրել-կարդալ, լեփ-լեցուն:

**41** **Տրված բառերից քանիսի՞ հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ.**

ատամնաբույժ, հողատեր, որմնասյուն, մաքսանենգ, տոնածառ, պատճեն, գիսաստղ, մանկագիր:

**42** **Նախադասության անդամներից քանիսի՞ ձևաբանական վերլուծության մեջ սխալ կա:**

*Եթե շրջանցեինք վարարած գետը կամ գնայինք մեծ ճանապարհով, որ հեռացնում էր մեր նպատակակետը, կկորցնեինք շատ ժամանակ, ուստի գետի միջով անվարան գնացինք առաջ:*

- **շրջանցեինք** – ըղձական եղանակ
- **շատ** – որակական ածական
- **կկորցնեինք** – պատճառական բայ
- **որ** – ստորադասական շաղկապ
- **վարարած** – ածական
- **առաջ** – կապ, հետադրություն

**43** **Տարբերակներից քանիսո՞ւմ է ընդգծվածը գերադաս նախադասություն:**

- **<u>Դաժան բանտում եղբոր զարհուրելի նահատակությունը խելագարեցնում էր նրան,</u>** և հոգին ամենևին չէր ուզում ընդունել, որ եղբայրն այլևս չկա:
- **<u>Ով էր դա՝</u>** ոչ ոք չէր կռահում, որովհետև դիմակալի տակ դժվար էր ճանաչել նրան:
- Կրակը քրքջում էր մշակների միամիտ փորձերի վրա, և բոցերի լեզուները, **<u>թվում է</u>**, արձակում էին դիվային հռհռոցներ:
- Դու սրբություն չես ճանաչում, և **<u>դրանից է,</u>** որ քո սուրը հենց քո դեմ է ուղղվում:

**44** **Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են գործածված.**

*հանգավորում, համեմատություն, մակդիր, շրջադասություն, չափազանցություն:*

Թղթից շինած ծաղիկների պես հիվանդոտ,
Թոքախտավոր ստեղների պես ռոյալի,
Փոշուց կերած նկարների նման անթով,
Որպես մեռած գեղեցկուհու մի հայելի՝
Հոգիս տխրել է անբարբառ ու չգիտի՝
Ինչո՞ւ է օրն իրիկնանում ու լուսանում,
Երբ ոչ մի լույս դրսից ընկած ճառագայթի
Չի՛ ամոքում նրա կարոտը անանուն:

**45** **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Անդեմ նախադասությունները, ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության, լինում են երկու տեսակի՝ անվանական և բայական:
2. Թերի նախադասության մեջ ենթական և ստորոգյալը միաժամանակ չեն կարող զեղչվել:
3. Բարդ նախադասության բաղադրիչ նախադասություններից մեկը կարող է լինել միակազմ:
4. Միակազմ նախադասությունները ունեն կիրառության նույն հաճախականությունը, ինչ երկկազմները:
5. Անվանական անդեմ նախադասություններում բայ չի կարող լինել:
6. Թերի նախադասություններում ամբողջությամբ զեղչված ստորոգյալը չի կարող վերականգնվել:

## Բ մակարդակ

**46** **Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքի բոլոր թվերի դիմաց են ճիշտ նշված:**

*Պապի շքախմբի անդամները զբոսնում էին հե-ենական(1) հինավուր-(2) մայրաքաղաքում և դիտում շուրջբոլորը: Շուկայի խլրտուքը ապշեցնում էր: Միր-կան(3) երկարաքղանցք հագուստները խառնվում էին բյուզանդական ոսկ-առ(4) պատմուճաններին: Կային զգ-շավոր(5) վաճառականներ, խր-վիլակներ(6) հիշեցնող սևամոր-(7) գերիներ: Մի կին խ-թին(8) բարբառով ինչ-որ աղո-քներ(9) էր մրմնջում: Արաբները վաճառում էին ու-տեր(10) ու ձիեր:*

1) 1-լ, 2-ց, 5-ու, 10-ղ
2) 3-իա, 6-թ, 7-թ, 10-ղ
3) 2-ց, 6-թ, 8-ր, 9-թ
4) 3-իա, 4-եվ, 7-թ, 8-ր

**47** **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գաղտնավանկի *ը*-ն ճիշտ տեղադրված:**

1) դռ(ը)նբաց, ս(ը)պանել, ընկ(ը)րկել
2) գտն(ը)վել, տ(ը)րտմել, ձեռն(ը)տու
3) քն(ը)նել, կ(ը)նճռոտ, խճ(ը)ճվել
4) կ(ը)րկնել, հանգց(ը)նել, խ(ը)մբվել

**48** **Ո՞ր շարքի բոլոր բառերում արմատի հնչյունափոխություն կա:**

1) սենեկապետ, երևութական, բնափայտ
2) դիտանցք, կտրուկ, երգչախումբ
3) վերնատուն, օրինապահ, դպրոց
4) մնջախաղ, փափկասուն, ընչացք

**49** **Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն *չկա:***

1) **երախայրիք** – օգտակար խորհուրդ, **հանգրվան** – հանգստանալու տեղ, կայան
2) **աղորիք** – հացահատիկ աղալու մեքենա, **նյութել** – որևէ դավանության հետևել
3) **քիվ** – ժայռի խոռոչ, **խայտաճամուկ** – վառ և բազմազան գույներով
4) **կոչնակ** – եկեղեցի հրավիրող զանգ, **դարակազմիկ** – նոր դարաշրջան բացող

**50** **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:**

1) հրավեր, գողոն, նաժիշտ
2) դատարկ, սնունդ, երաշտ
3) պնակ, խնդիր, տրտում
4) ճանապարհ, ընկույզ, սնոտի

**51** **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմված մեկ արմատից և երկու ածանցից:**

1) համապարփակ, անարժեք, բուրաստան, չխոսկան
2) վարկավորում, մակերեսային, վերաքննիչ, բեմադրիչ
3) անընթեռնելի, ապավինում, դժկամորեն, համալսարան
4) տմարդի, տարատեսակ, փոխօգնություն, բաղդատական

**52** **Ո՞ր շարքի բառերից *ոչ մեկի* որևէ արմատի *չի* կարող միանալ տրված վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:**

1) ***-այինն*** -առաջնեկ, խորհրդակցել, կիսաշրջան
2) ***-մունք*** -փետրվար, անբաժանելի, ուսանող
3) ***-ոն*** -պարագլուխ, ծամկալ, տերևաթափ
4) ***-ենի*** -նշաձող, ընձառյուծ, թզուկ

**53** **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում ներքին հոլովման:**

1) եղբայր, անձնանուն, դեղատուն
2) հուշասյուն, գայլաշուն, գարուն
3) ձյուն, բազմանկյուն, ավյուն
4) վանահայր, ուրախություն, ցասում

**54** **Ո՞ր նախադասության մեջ մակբայ կա:**

1) Նա մոտեցավ չարխին, և ոտքերն սկսեցին շարժվել համաչափ ռիթմով:
2) Այդ օրերին գյուղը կրկին ստացավ մի զամբիկ՝ տեղական ձիերից բարձր:
3) Կապույտ երկնքում՝ արևի դիմաց, մի երկու րոպե շողում են սավառնակի թևերն ու մարմինը:
4) Ձորի ճանապարհով՝ մեղվանոցի մոտով, դեպի գետն իջան գյուղ եկած հովեկները:

**55** **Ո՞ր նախադասության բոլոր բայերն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի):**

1) Ձին թռավ որթատունկերի և փոքր ծառերի վրայով և ինձ գետին գցելով՝ վազեց հեռու:
2) Ամեն անգամ, երբ Ավետը շոշափում էր ցավող վերքը, ասես ասեղներով ծակծկում էին ողջ մարմինը:
3) Բողարը ջահել շուն էր. գայլից դեռ մի քիչ վախենում էր, այդ պատճառով էլ հաչում էր դեռ հեռվից:
4) Ես կրունկներով խփեցի ձիու կողերին, մի անգամ էլ նա կանգնեց հետին ոտքերի վրա, զիլ խրխնջաց և առաջ նետվեց:

**56** **Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ կա:**

1) Ինչպես ամեն ինչից երևում էր, Պետրոսը չէր դառնալու այն առաքյալը, որն անհրաժեշտ էր գյուղին:
2) Խառնվել է գլխում հին ու նորը, միտքը տկարացել է, և էլ երբեք չի իմանա, թե ինչ է սպասվում վաղը:
3) Պատահե՞լ է ձեզ ձմռան բքին լինել դրսում՝ խավարի մեջ, երբ սառչում է ձեր դեմքը, և ենթադրվում է, թե փրկության ուղի չկա, և հանկարծ ցոլում է վիթխարի մի կրակ:
4) Երբ բակ մտա, ինձ այնպես թվաց, թե սպիտակ տան ներսում ինչ-որ մարդիկ են հավաքվել, ու մեկը, իր ափերից դուրս եկած, գոռգոռում է:

**57** **Ո՞ր շարքի բոլոր բառերն են շաղկապներ:**

1) քան, որ, հենց, գոնե
2) թե, եթե, իսկ, արդյոք
3) թեկուզ, բայց, որովհետև, քանի դեռ
4) թե չէ, կամ, հանուն, թեպետ

**58** **Ո՞ր նախադասության մեջ պակասավոր բայ *չկա:***

1) Ով եկել էր գյուղից հեռու, նա թողել էր հողը խոնավ:
2) Ես չգիտեմ՝ ուր են տանում հեռավոր Ուղիների ժապավեններն անհամար:
3) Ո՞ր աշխարհում ունեմ շատ բան՝ Միտք եմ անում՝ է՞ս, թե՞ էն:
4) Եթե մինչև անգամ Լսած լինես, թե ես այս աշխարհում չկամ, Կգամ, ինչ էլ լինի, կգամ:

**59** **Տրված նախադասություններից որի՞ դիմաց է ստորադաս նախադասության բնույթը սխալ նշված:**

1) Ներկաների համար պարզ էր, որ կինը հիվանդի խոսքերին նշանակություն չէր տալիս: *(ենթակա)*
2) Քո նվերը ինձ այն կլինի, եթե կարդաս մեր դասականներին: *(ստորոգելի)*
3) Զորյանի կինը՝ տիկին Սաթենիկը, շատ սիրալիր ինձ ներս հրավիրեց, թեև ինձ չէր ճանաչում: *(ձևի պարագա)*
4) Երիտասարդներից մի փոքր հեռու նստած էր ավանի փոստատան կառավարիչը, որ բարեդեմ, խելոք աչքերով և գորշավուն մորուքով մի մարդ էր: *(բացահայտիչ)*

**60** **Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

1) *Այն օրը, երբ Գևորգը վերադարձավ ճամփորդությունից, որոշեցին նրան ամուսնացնել:*
   Գևորգի՝ ճամփորդությունից վերադառնալու օրը որոշեցին նրան ամուսնացնել:
2) *Հոր երազանքն այն է, որ որդին իր նման քանդակագործ դառնա:*
   Որդու՝ իր նման քանդակագործ դառնալը հոր երազանքն է:
3) *Երևում էր՝ ինչպես է հանդերի վրա աղեղ տալիս հնձվորի գերանդին:*
   Երևում էր հնձվորի՝ հանդերի վրա աղեղ տվող գերանդին:
4) *Գյուղի բնակիչները վախից կծկվել էին բարձրաբերձ լեռան անմատչելի ծերպերում, որ ներքևից չէին երևում:*
   Գյուղի բնակիչները վախից կծկվել էին ներքևից չերևացող բարձրաբերձ լեռան անմատչելի ծերպերում:

**61** **Ո՞ր նախադասության մեջ է դերբայական դարձվածը *(դերբայը իր բոլոր լրացումներով)* ճիշտ ընդգծված (նախադասությունները կետադրված չեն):**

1) Արտառոց է ինձ համար երբ դրամատիկական երկը համեմատում են բամբակի իսկ ներկայացումը <u>նրանից ստացված հագուստի հետ:</u>
2) <u>Երկար ճանապարհից հոգնած</u> տարեց ուղևորը գլուխը հենել էր գնացքի պատուհանին:
3) Նրա ձախողման <u>պատճառը ուսուցչի հանձնարարությունները ժամանակին չկատարելն</u> էր:
4) Պատերազմից հետո մենք ձեռքներս <u>փողոցի անցորդներին պարզած</u> կանգնել էինք եկեղեցու դռան մոտ:

**62** **Ո՞ր նախադասության մեջ միայն մեկ որոշիչ կա:**

1) Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ, Երբ ամեն ինչ երազում է հոգու հետ:
2) Արթնացող ամպի հառաչն առաջին Գալիս մտնում է ականջը նրա:
3) Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց:
4) Մահախուճապ սերունդների Աչքն է դիպել լույս գագաթին Ու անցել:

**63** **Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):**

*Սարոյանը գրել է՝ …… իր …. գրողներից մեկի՝ Անտոն Չեխովի …. սկզբունքին. «Իրավացի է նա, ով անկեղծ …..»:*

(1. եմ, 2. հռչակել, 3. սիրել, 4. հետևել)

1) 4, 2, 1, 3
2) 2, 4, 1, 3
3) 4, 3, 2, 1
4) 2, 3, 4, 1

**64** **Ո՞ր նախադասության մեջ փակագծեր *չպիտի* դրվեն (նախադասությունները կետադրված չեն):**

1) Հիշում եմ երբ Վանի արևը կանգնում էր զենիթում փոքր ժամանակ արևն ինձ մեծ շատ մեծ էր թվում ծովից եկող մեղմ սյուքը փարվում էր քաղաքին:
2) Մի օր դա իրենց բաժանման յոթերորդ օրն էր հանկարծ դուռը թակեցին և ինչ-որ անծանոթ մարդ նրան նամակ հանձնեց:
3) Տաթևի նշանավոր վանքում Հովհան Որոտնեցու նա նաև նույնանուն համալսարանի հիմնադիրն էր ծավալած գործունեության շնորհիվ միջնադարյան Հայաստանում Տաթևը կրթական խոշոր կենտրոն է դառնում:
4) Անարդյունք մնաց այրի Նատալյայի մայրական հանդիմանությունը նա մատուցարանը վերցրեց և լուռ դուրս գնաց գլուխը խորհրդավոր կերպով շարժելով:

**65** **Հատվածներից ո՞րն է Հ. Սահյանի «Մասրենի» բանաստեղծությունից:**

1) Արևոտ մի սար եմ հիշում՝
Ճակատին ձյունի պատառիկ,
Սարն ի վար բարակ մի առու՝
Շուրթերին հայրեն ու տաղիկ…
2) Փայտահատը հին երգն էր կրկնում
Եվ տաք սողոցն իր յուղում էր կրկին,
Թեղին անտարբեր ականջ էր դնում
Տապալված կաղնու խուլ հառաչանքին:
3) Ծանր նստել է և ամեն մեկին
Իրեն արժանի պատիվն է տալիս.
Վայրի աղավնուն՝ հանճարը վայրի,
Մոլորված ամպին իր քիվն է տալիս,
Խրտնած քարայծին՝ մութն իր քարայրի:
4) Կախվել է ժայռը անդունդի վրա
Եվ դարեր այդպես կախված է մնում,
Ջրերի մեջ են ոտքերը նրա,
Իսկ գլխին հոգնած ամպերն են քնում:

**66** **Ե. Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է հետևյալ հատվածը:**

*Եվ արդյոք ո՞վ է երազել այդքան դաժան -*
*Ու լուսավոր առավոտները իմ հոգու,*
*Ո՞վ դարձրեց- մի անկրակ իրիկնաժամ,*
*Ու գորշ պարան, ու երկնուղեշ փայտե՛ր երկու:*

1) «Դանթեական առասպել»
2) «Անվերնագիր»
3) «Մահվան տեսիլ»
4) «Վահագն»

**67** **Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

*Երկիր մոլորակը, որքան էլ ուսումնասիրված, այնուամենայնիվ դեռ բազում գաղտնիքներ ունի մեզ համար, գաղտնիքներ, որոնք ուղղակի հնարավոր չէ բացատրել մերօրյա գիտության զարգացման մակարդակով: Երկրագնդում կան վայրեր, որտեղ ֆիզիկայի ինչ-ինչ օրենքներ պարզապես չեն գործում, օրինակ՝ որոշ վայրերում գնդերը թեք հարթությամբ գլորվում են ոչ թե ներքև, այլ վերև, ուրիշ տեղերում առարկաները, որոնք իրականում ուղիղ են կանգնած, ինչ-որ անկյան տակ գետնի վրա թեքված են երևում: Այդպես է, օրինակ, մոլորակի ամենաառեղծվածային վայրերից մեկում՝ Կալիֆոռնիայում գտնվող մի փոքրիկ բնակավայրում, որտեղ առաջին անգամ բնակություն են հաստատել հնդկացիները: Այստեղ մի քանի անգամ վերակառուցված տունը այդպես էլ ուղիղ չի կանգնում, թեև ըստ հարթաչափի՝ հիմքը կատարելապես ուղղված է լինում: Ավելին՝ մարդիկ այստեղ իրենց իրական հասակով չեն երևում. ոմանք՝ ավելի բարձրահասակ, մյուսներն ավելի կարճահասակ են թվում:*

*Վերջին տարիներին կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այդպիսի անսովոր երևույթներ դիտվում են երկրագնդի տարբեր վայրերում, սակայն հարկ է նշել, որ տարածքները, որոնցում գործում են նման անոմալիաները, խիստ սակավաթիվ են:*

*Այդ տարածքներն իրենց հետաքրքրությամբ գրավում են զբոսաշրջիկների, ուստի և այդ՝ եկամտաբերության առումով բարենպաստ վայրերում հյուրատներ կառուցող ինժեներների ուշադրությունը:*

1. Երկիր մոլորակի բոլոր այն վայրերում, որտեղ անոմալ երևույթներ են նկատվում, մարդիկ իրենց իրական հասակից ավելի բարձր կամ ցածր են թվում:
2. Երկրագնդի որոշ վայրերում դրսևորվում են այնպիսի անոմալ երևույթներ, որոնց պատճառը մերօրյա գիտությունը դեռևս չի կարողանում պարզել:
3. Հնդկացիները պարզել են, որ Կալիֆոռնիայում ֆիզիկայի մի քանի օրենքներ չեն գործում:
4. Կալիֆոռնիայի մի բնակավայրում կան տներ, որոնք նույնիսկ վերակառուցումներից հետո էլ ուղիղ չեն կանգնում՝ հակառակ հարթաչափի ցույց տվածի:
5. Աշխարհի տարբեր վայրերում դիտվող անսովոր երևույթները հետաքրքրություն են առաջացնում զբոսաշրջիկների և նրանց համար կացարաններ կառուցող ինժեներների համար:

**68** **Ո՞ր նախադասություններում բայի սխալ ձև կա:**

1. Երբ փորձում էի նրան հիշեցնել տված խոստումները, չլսելու էր տալիս:
2. Դաշտի խաղաղության մեջ քնքշորեն բուրացող ծաղիկները մի պահ մեղմեցին նրա հոգու ցավը:
3. Անծայրածիր հեռուներում սևին տվող լեռների սուր կատարները ահարկու տպավորություն էին թողում:
4. Մթության մեջ խարխափելով՝ փոքրիկներն առաջ էին շարժվում ու հանկարծակի իրար կպնելիս սարսափած ճչում էին ու կծկվում:

**69** **Ո՞ր հատվածներում հանգման անուղղակի խնդիր կա:**

1. Բայց հուշերիս մեջ նայում ինձ դարձյալ,
   Ժպտում են դարձյալ աչքերը քո ջինջ:
2. Ու քարշ եմ գալիս ու քարշ եմ գալիս,
   Անքուն ջրի պես դիպչում քարերին,
   Անշունչ քարին էլ երնեկ եմ տալիս:
3. Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին,
   Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին:
4. Է՜հ, ի՞նչ արած, բախտը խռով
   Թող աշխարհում մեզ չհիշի,
   Միայն ապրենք մենք սիրելով,
   Թեկուզ ես՝ քեզ, դու՝ ուրիշի:

**70** **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. ***Ես ինքս, դու ինքդ, նա ինքը*** կապակցությունների երկրորդ բաղադրիչները բացահայտիչներ են:
2. Հայերենի ժխտական դերանուններն են՝ ***ոչ ոք, ոչ մեկը, ոչ մի, ոչ միայն, ոչինչ:***
3. ***Այսքան, այդքան, այնքան*** ցուցական դերանունները գործածվում են թե՛ որպես գոյականի, թե՛ որպես բայի լրացում:
4. ***Ես, դու, նա, ինքը*** անձնական դերանունները թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվում հոլովվում են գոյականից տարբեր՝ դերանվանական հոլովմամբ:
5. Հարաբերական դերանունները չեն դառնում նախադասության անդամ:
6. Անորոշ դերանուններից ոչ մեկը ենթակայի պաշտոն կատարել չի կարող: